ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, քարտուղարություն, հեռ. 596-125

N 27/69 «02» 02 2023թ.

Ձեր

«ՍՈՖԹ ՊՐՈՖ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Վ. ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

ՀՐԱՎԵՐ

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ոստիկանության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել **ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ:**

Առաջարկվում է Ձեզ մատուցել վերոնշյալը:

Գնումները ֆինանսավորվելու է ՀՀ 2023 թվականի ԱՎՎ բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնման ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն գնումներին մասնակցելու իրավունքը հավաստելու համար պատվիրատուին պետք է ներկայացվի հաստատված և ստորագրված հայտարարություն այն մասին, որ «ՍՈՖԹ ՊՐՈՖ» ՍՊԸ-ն ունի .

1. մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը
2. մասնագիտական փորձառություն
3. տեխնիկական միջոցներ
4. ֆինանսական միջոցներ
5. աշխատանքային ռեսուրսներ

Ձեզ է ուղարկվում **ՀՀ Ո ՄԱԾՁԲ-2023-ԱՎՎ/ԾԱՍ/Ա-7** ծածկագրով ընթացակարգի պայմանագրի նախագիծը:

Համաձայնության դեպքում անհրաժեշտ է 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Ձեր կողմից ստորագրված և կնքված պայմանագիրը:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ **Վ. ՄՈՎՍԻՍՅԱՆ**